



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2017 թվականի թիվ 107-Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՂԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2017 թվականի մայիսի 10-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Բերդի թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզան Արտեմի Թումանյանի հետ 2012 թվականի մայիսի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը 2017 թվականի մայիսի 10-ից Ռուզան Արտեմի Թումանյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Բերդի թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

2017թ. մայիսի 10  
ք.Իջևան